ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆ

Բանալի բառեր - Հայաստանի Հանրապետություն, անկախություն, Գերագույն Խորհուրդ, Հռչակագիր:

1990թ. մայիսի 20-ին, դեռևս խորհրդային Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություններ, որին մասնակցեց նաև Արցախի հայ բնակչությունը[1]: Ընտրական պայքարը հիմնականում ընթացավ Հայոց Համազգային Շարժման և Հայաստանի կոմունիստական կուսակցության միջև: Քանի որ ավանդական կուսակցությունները դեռ Հայաստանում ազատորեն չէին գործում, ուստի ընտրություններում ձայները բաժանվեցին ՀՀՇ-ի և Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչների միջև: Կոմունիստական վարչակարգից և Արցախի հարցում ԽՍՀՄ կոմունիստական ղեկավարության հակահայկական դիրքորոշումից հիասթափված՝ ընտրողների մեծ մասը պաշտպանեց ՀՀՇ-ին:

1990թ. օգոստոսի 4-ին հանրապետությունում նորընտիր խորհրդարանը Հայաստանի Գխ-ի նախագահ ընտրեց ՀՀՇ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին:

Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան ազգային անկախ պետականության ստեղծմանը:

Սակայն, անկախ պետականության ստեղծումը հեշտ չընթացավ:: Հայաստանը ստիպված եղավ հաղթահարել մի շարք խնդիրներ՝ անկախության հռչակումը և անկախության պահպանումն իրականացնելու համար:

Այս ուղղությամբ կատարված առաջին և ամենակարևոր քայլը կարելի է համարել Հայկական ԽՍՀ ԳԽ - ի 1990թ. օգոստոսի 23-ին ընդունած որոշումն՝ անկախ պետականության հաստատման գործընթացի սկզբի մասին[2]:

1989-1990թթ. նման որոշումներ ընդունեցին նաև Միութենական մյուս հանրապետությունները: Դրանց շարքում առանձնանում է Խորհրդային Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի (1990թ. մայիս) Հայաստանի անկախության մասին ընդունած հռչակագիրը (1990թ. օգոստոսի 23): Դրանում ՀԽՍՀ Գխ-ը արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը և գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև, նաև նպատակ ունենալով վերականգնելու

---

[1] Տես՝ **Ռ. Լ. Ազիզբեկյան,** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992, էջ 69:

[2] «Խորհրդային Հայաստան», թիվ 194(21125), 25 օգոստոսի, 1990թ.:

պատմական արդարությունն ու կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, շարունակելով 1918թ. մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի կառուցումը և այլն՝ հռչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը[1]:

Մինչ այդ ՀԽՍՀ ԳԽ-ի օգոստոսի 4-ի որոշմամբ բարձրագույն օրենսդիր մարմնի պատգամավորներից ստեղծվել էր Հայաստանի անկախության հռչակագրի նախապատրաստման 15 հոգուց բաղկացած հանձնաժողով[2]: ԳԽ-ի օգոստոսի 6-ի որոշմամբ էլ ձևավորվել էր ընդունվելիք հռչակագրից բխող սահմանադրական փոփոխություններ մշակող հատուկ աշխատանքային հանձնաժողով[3]:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ այդ կարևորագույն իրավաքաղաքական փաստաթղթի կազմմանը ներգրավվեցին նաև հանրապետության հումանիտար գիտությունների բնագավառի լավագույն մասնագետներ՝ իրավաբաններ, քաղաքագետներ, փիլիսոփաներ, պատմաբաններ և այլն

ԳԽ-ի հանձնաժողովի քննարկմանը հռչակագրի իրենց նախագծերն էին ներկայացրել ՀԿԿ Կենտկոմը, Սահմանադրական իրավունք միության խորհուրդը, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և մի շարք այլ քաղաքական կազմակերպություններ: Գրեթե բոլոր նախագծերն էլ ունեին որոշակի ընդհանրություններ: Հռչակագրի բոլոր նախագծերում էլ շեշտվում էր, որ այդ փաստաթուղթը հիմքն էր դնելու նոր իրավական-ժողովրդավարական պետության[4]: Բնականաբար ակնհայտ էին նաև տարբերություններ նախագծերի բովանդակության մեջ: Հռչակագրի նախագծերի մի զգալի մասում որոշակիորեն ուրվագծվում էին փաստաթուղթը հեղինակած ուժերի հուզական տրամադրությունները: Իսկ մյուս մասում մոտեցումը գիտական էր, կար իրավագիտական մակարդակ և առաջարկվող վերափոխումների հիմնավորված բնույթ[5]:

Հայաստանի լիակատար քաղաքական ինքնորոշումը հիմնականում պաշտպանում էր ԳԽ-ի արմատական ժողովրդավարական թևը՝ իշխանության համար պայքարում արդեն առաջին լուրջ հաղթանակները տարած Հայոց համազգային շարժման գլխավորությամբ: Հայաստանի լիակատար անկախացման անհրաժեշտությունն այդ ուժերի սկզբունքա-

[1] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.):
[2] ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 15(971), 23 օգոստոսի 1990թ., էջ 11-12:
[3] «Խորհրդային Հայաստան», թիվ 180(21111), թիվ181(21112) 8, 9 օգոստոսի, 1990թ.:
[4] Տես՝ **Է. Վ. Պողոսյան,** Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երևան, 2013, էջ 31:
[5] «Խորհրդային Հայաստան», թիվ182 (21113), 10 օգոստոսի, 1990թ.:

յին դիրքորոշումն էր: Այդ հարցում նրանք բացառում էին անգամ ամենաչնչին զիջումը կենտրոնին[1]:

Անկախության հռչակման նախօրյակին, 1990թ. օգոստոսի սկզբներին Հայկական ԽՍՀ Գխ- ի նորընտիր նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Մոսկվա կատարած իր այցի ընթացքում կենտրոնական իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումներում, արտահայտելով Հայաստանի հասարակության մեջ իշխող տրամադրությունները, որոշակիորեն շեշտել էր, որ հայկական կողմը միութենական որևէ պայմանագրի անհրաժեշտություն չի տեսնում և սկզբունքորեն դեմ է տակավին փլուզվող ԽՍՀՄ-ի սուբյեկտներին ինչ-որ սահմանադրություններ, միութենական ընդհանուր օրենքներ պարտադրելու կենտրոնի ժամանակավրեպ գործելակերպին[2]:

Վերջապես 1990թ. օգոստոսի 7-ին Գխ- ի հռչակագիրը կազմող հանձնաժողովը հիմք ընդունելով հիմնական հարցադրումների շուրջը որոշ դեպքերում միմյանց նույնիսկ հակասող ութը տարբերակները, մշակեց, ամբողջացրեց և Գխ-ի քննարկմանը ներկայացրեց հռչակագրի երեք նոր տարբերակ[3]: Այդ երեք տարբերակների հիման վրա էլ հետագայում ձևավորվեց հռչակագրի ընդունված, հայ ժողովրդի համար դարակազմիկ տարբերակը[4]:

1990թ. օգոստոսի 20-ին հանձնաժողովը Գխ- ին ներկայացրեց այդ նոր միասնական տարբերակը[5]: Ապա սկսվեց հռչակագրի մանրազնին քննարկման փուլը:

Հարկ է նշել, որ այդ օրերի համար չափազանց զգալի էր զգուշավոր գործելակերպը, Քանի որ չնայած ԽՍՀՄ-ը գրեթե կործանվել էր, այնուամենայնիվ ագրեսիվ մոտեցումներ էր ցուցաբերում իր կազմից ազատվել ցանկացող հանրապետությունների հանդեպ: Կարելի է նշել, որ թերևս այս էր պատճառը, որ Գխ- ի 1990թ. օգոստոսի 23-ի նիստում, երբ հաշված ժամեր էին մնացել հռչակագրի պաշտոնական ընդունմանը, օրենսդիր մարմնում դեռ բանավեճեր էին ընթանում Գխ- ում փաստաթղթի վերջնական անվանման հարցի շուրջ: Կայն վերնագրի հինգ տարբերակներ՝ «Հռչակագիր Հայաստանի անկախ պետականության մասին», «Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին հռչակագիր», «Հայաստանի անկախության մասին հռչակագիր», «Հռչակագիր Հայաստանի պետական ան-

---

[1] Տես՝ նույն տեղում, էջ 34:

[2] «Խորհրդային Հայաստան»,թիվ 183 (21114),11 օգոստոսի, 1990թ.:

[3] **Է. Վ. Պողոսյան**, նշված աշխ., էջ 34:

[4]« Խորհրդային Հայաստան», թիվ183 (21114),11 օգոստոսի, 1990թ.:

[5] Նույն տեղում:

կախության մասին» և «Հայաստանի քաղաքական անկախության մասին հռչակագիր»[1]:

Քվեարկության դրվեցին վերնագրի բոլոր հինգ տարբերակները և արդյունքում ձայների մեծամասնությամբ (159 կողմ) հայ ժողովրդի համար բախտորոշ այդ փաստաթուղթը անվանվեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»[2] :

Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ հռչակագրի քննարկումների ընթացքում վիճահարույց հարց դարձավ ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին դրույթը ներառումը: ՀՀՇ-ն ընդհանրապես դեմ էր հռչակագրում ցեղասպանության հարցը ներառելուն: Սակայն, մի շարք ժողովրդական պատգամավորենր (Ա. Նավասարդյան, Հ.-Սիմոնյան, Ի. Մուրադյան, Հ. Բաբուխանյան, Ռ. Համբարձումյան և այլք) ամեն կերպ դիմադրեցին և կարողացան հռչակագրում ներառել ցեղասպանության մասին դրույթը[3]:

Հռչակագրում ցեղասպանության դրույթը ներառելուց ոչ պակաս վիճահարույց էր, թե ինչ կերպ պետք է այն ձևակերպվեր: Գխ-ի օգոստոսի 22-ի նիստի ավարտին, արդեն մնացել էին ցեղասպանության դրույթը ձևակերպող երկու տարբերակներ, որոնք էլ քննարկման դրվեցին օգոստոսի 23-ի նիստում[4]: Ձայների մեծամասնությամբ հռչակագրում ավելացավ նաև թվով 11-րդ կետը, որում արձանագրվում էր. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»[5] :

Վերը նշված իրադարձությունները կարելի է համարել այդ օրերին բարձրագույն իշխանական մարմնում՝ Գխ-ում ընդդիմության առաջին լուրջ դրսևորում՝ հանրապետությունում իշխանությունը դեռ նոր ստանձնած ՀՀՇ – ի ներկայացուցիչների դեմ:

Այսպիսով, շուրջ 3 շաբաթյա բուռն աշխատանքները պսակվեցին հաջողությամբ: 1990թ. օգոստոսի 23-ին Գխ ի հերթական նիստում Հայաստանի կարգավիճակը ամրագրող փաստաթուղթը «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» անվանումով արդեն ամբողջապես դրվեց քվեարկության: Օգոստոսի 23-ի նիստում հռչակագրի օգտին քվեարկեցին 183 ժողովրդական պատգամավորներ: 1990թ. օգոստոսի 23-ին, Երևանի

[1]« Խորհրդային Հայաստան», թիվ 193 (21124),24 օգոստոսի, 1990թ.:

[2] Նույն տեղում:

[3] Տես՝ **Է. Մինասյան,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմութուն, Երևան 2013, էջ 115:

[4] **Է. Վ. Պողոսյան,** նշված աշխ., էջ 38:

[5] «Խորհրդային Հայաստան», թիվ 190(21121),21 օգոստոսի, 1990թ.:

ժամանակով ժամը 12 անց 3 րոպեին Գխ-ը իրականացրեց պատմական կարևոր քայլ՝ ազգային պետականության կորստից 70 տարի անց հռչակելով Հայաստանի անկախությունը[1]: Այս պատմական իրադարձությանը հաջորդեց Հայաստանի Գխ-ի քարտուղար Ա. Սահակյանի՝ հռչակագրի ընդունումից անմիջապես հետո արտահայտած տեսակետը, որ հռչակագիրը, իրոք, պատմական, քաղաքական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է, որն ընդունվեց սուր բանավեճի պայմաններում[2] :

Հռչակագիրը կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին: Այն բաղկացած էր 12 կետից և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները [3]:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի պատմության մեջ, այսպիսով, սկսվում էր երրորդ Հանրապետության շրջանը (առաջինը՝ 1918-1920, երկրորդը՝ 1920-1991թթ.): Կարևոր է նշել, որ թեև Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր և շատ հեռու ինքնանկախ հանրապետություն լինելուց, այնուամենայնիվ այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ Հանրապետությունը[4] :

Հռչակագրում սահմանված անկախ պետականության հաստատման դրույթների հետևողական իրագործումը սկսվեց այն ընդունելուց անմիջապես հետո: Հայկական ԽՍՀ 12-րդ գումարման Գերագույն խորհրդի 1990թ. հուլիսի 20-ից հրավիրված առաջին նստաշրջանը ընդամենը մեկ ամիս անց վերածվեց Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի՝ առաջին գումարման Գերագույն խորհրդի, որին էլ բարձր պատիվ էր վիճակված՝ դնելու անկախ Հայաստանի պետականության առաջին անկյունաքարը[5] : ՀՀ Գերագույն խորհուրդը օգոստոսի 24-ին ընդունեց պետական դրոշի մասին օրենքը, որով ՀՀ դրոշը եռագույնն է: Նույն 1990թ. օգոստոսի 24-ին Գխ ի որոշմամբ հայտարարվեց նորանկախ Հայաստանի պետական զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի կազմակերպումն ու ղեկավարումը հանձնարարվեց ՀՀ Մի-

---

[1] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 16(972), 31 օգոստոսի 1990թ., էջ 5-6:

[2] «Խորհրդային Հայաստան», թիվ 193(21124),24 օգոստոսի 1990թ.:

[3] **Է. Մինասյան,** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003), Երևան, 2003, էջ 22:

[4] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 16(972), 31 օգոստոսի 1990թ., էջ 6:

[5] **Է. Վ. Պողոսյան,** նշված աշխ., էջ 46:

նիստրների խորհրդին և խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովներին: Այդ պատմական որոշումներով, փաստորեն, սկիզբ դրվեց Հայաստանի անկախության հռչակագրով սահմանված անկախացման գործընթացին:

ՀՀ կառավարության 1990թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ հայտարարվեց ՀՀ զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի անցկացման նպատակով, ընդունված որոշման համաձայն, ստեղծվեց 15 հոգանոց կոմիտե՝ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի գլխավորությամբ[1]:

1991թ. հուլիսի 1-ի Հայաստանի խորհրդարանի նիստում քննարկվեց նաև օրհներգի և զինանշանի հարցը: 158 պատգամավորներից 146-ը նախապատվությունը տվեց «Մեր հայրենիք» ստեղծագործությանը՝ որպես օրհներգի հիմք[2] :

ՀՀ զինանշանի հարցն իր վերջնական լուծումը ստացավ միայն հաջորդ տարում: ՀՀ ԳԽ-ի 1992թ. մարտի 25-ին կայացած հերթական նիստի որոշմամբ, որպես Հայաստանի պետական զինանշան ընդունվեց 1920թ. հուլիսին հաստատված Հայաստանի առաջին հանրապետության հերալդիկան[3]:

1996թ. հունվարին Հայաստանի պետական դրոշն ու զինանշանը Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության՝ ՎԻՊՕ-ի կողմից ճանաչվեցին, որպես ՀՀ սեփականություն[4] :

Անկախության հռչակագիրն, ըստ էության, երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում ընդունվել է երկու անգամ: Առաջին անգամ, ինչպես արդեն համոզվեցինք, դա տեղի ունեցավ ՀԽՍՀ Գխ-ի 1990թ. օգոստոսի 23-ի հայտնի նիստում, իսկ երկրորդ անգամ հաջորդ օրը՝ օգոստոսի 24-ին, երբ տակավին մեկ օրական դարձած արդեն առաջին գումարման ՀՀ Գերագույն խորհրդի նիստում պատգամավորները կրկին անդրադարձան Հայաստանի անկախության մասին հռչակագրին, քանի որ այն մշակող հանձնաժողովը, միայն այդ ժամանակ էր հասցրել փաստաթղթի մեջ վերջնական շտկումներ և մասնակի խմբագրական բնույթի վերափոխումներ մտցնելու նախորդ օրը սկսած աշխատանքը, որից հետո այն օգոստոսի 24-ին դարձյալ, արդեն, վերջնական խմբագրված տեսքով դրվեց քվեարկության և վերջնական ընթերցումով ընդունվեց այս անգամ 192

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց.163, գ.418, թ.1-3:
[2] ՀՀ Գերագույն Խորհրդի տեղեկագիր, N3(993), 15 հուլիսի 1991թ.,էջ 7:
[3] ՀՀ Գերագույն Խորհրդի տեղեկագիր, N8(1012), 30 ապրիլի 1992թ.,էջ 3:
[4] «Հայաստանի Հանրապետություն», թիվ 8 (1447), 17 հունվարի, 1996թ.:

ձայնով (2 ձեռնպահ)[1]: Հենց այս նիստում է, որ Հայաստանի անկախության մասին հռչակագրի արդեն վերջնական տեքստը մեծ հանդիսավորությամբ հրապարակեց Գխ -ի պատգամավոր Արամ Մանուկյանը[2] :

Ինչպես վերևում նշեցինք, մեր երկրի համար պատմության նոր էջ բացող, քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները նախանշող հռչակագիրը, բաղկացած էր 12 կետից:

Հռչակագրի հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը հաստատված չէր Հայաստանի ԳԽ-ի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում:

Փաստաթղթում ամրագրվում էր, որ Հայաստանն ինքնիշխան պետություն էր՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Նրա ամբողջ տարածքում գործելու էին միայն ՀՀ Սահմանադրությունը և օրենքները: Այստեղ բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում էր ՀՀ քաղաքացիություն, որի իրավունքը պետք է ունենար նաև արտերկրի հայությունը: Պետությունն ապահովելու էր իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից [3]:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի հողը, նրա ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը:

Հայաստանը սեփականության բազմաձևության հիման վրա որոշելու էր իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնելու էր սեփական դրամ, ազգային բանակ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ ՀՀ- ն իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծելու էր սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում մայրենի լեզվի, իբրև պետական լեզվի կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգն-

---

[1] **Է. Վ. Պողոսյան**, նշված աշխ., էջ 40:

[2] «Խորհրդային Հայաստան», թիվ 195 (21126), 26 օգոստոսի, 1990թ.:

[3] Տես՝ **Է. Մինասյան,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան 2013, էջ 117:

վում էին Հայ Առաքելական եկեղեցու իրավունքները: Հռչակագիրը հաստատում էր Հայաստանի վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ: Մինչև նոր սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումը, հռչակագիրը ծառայելու էր իբրև ծրագրային փաստաթուղթ[1]:

Հռչակագիրը միաժամանակ հիմք էր նոր օրենսդրության, ՀՀ Սահմանադրության մշակման, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի գործող Սահմանադրության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման համար:

Անկախության հռչակագիրն, անշուշտ, նոր և դրական երևույթ էր հայ իրականության մեջ, որի հետագա գործածումն ու զարգացումը, սակայն, վիճակված չէր տանել խաղաղ պայմաններում: Նախկինի Մոսկվան Խորհրդային Միությունը դիտում էր որպես միասնական և անբաժանելի պետություն՝ իշխանության իր բոլոր լծակներով: Մինչդեռ երկիրն արդեն պառակտվում էր, մյուս պատճառներից բացի, նաև ազգամիջյան ընդհարումների, բախումների և նույնիսկ պատերազմների պատճառով[2]:

1991թ. մայիս-հունիսից Լեռնային Ղարաբաղում հայ-ադրբեջանական իսկական ազգամիջյան պատերազմ սկսվեց, որն աստիճանաբար լայն ծավալներ ընդունեց: Նույն թվականի օգոստոսի 30-ին Ադրբեջանական ԽՍՀ Գխ-ն ընդունեց որոշում-հռչակագիր Ադրբեջանի անկախությունը վերականգնելու մասին[3]: Ընդունված հռչակագրում շեշտված էր, որ նորանկախ Ադրբեջանի Հանրապետությունն ընդգրկելու էր 1918-1920թթ. Ադրբեջանական (մուսավաթական) Հանրապետության սահմանները[4]:

Ադրբեջանի և միութենական իշխանությունների պետական մակարդակով կազմակերպած պատերազմն ընդհուպ մոտեցավ Հայաստանի սահմաններին: Միութենական իշխանությունների նման մոտեցումը կարելի է նաև բացատրել որպես կայսրության փլուզումն ամեն գնով կասեցնելու ձգտում: Քանի որ Հայաստանը անկախացման ճանապարհով էր ընթանում, Մերձբալթյան հանրապետությունների, Վրաստանի և Մոլդովայի հետ միասին չմասնակցեց կենտրոնի նախաձեռնությամբ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ին անցկացված համամիութենա-

[1] Տես՝ նույն տեղում, էջ 118-119:

[2] Տես՝ **Հ. Աբրահամյան,** Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011թթ. , Երևան, 2011, էջ 73-74:

[3] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 266:

[4] **Է. Մինասյան,** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003), էջ 24:

կան հանրաքվեին՝ այն որակելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասող[1] :

Կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու նպատակով Հայաստանի Գերագույն խորհուրդը նույն թվականի մարտի 1-ին որոշեց 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու վերաբերյալ[2] : Որոշվեց նաև ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք տալ իրադրության կտրուկ փոփոխության դեպքում որոշում կայացնել հանրաքվեն ավելի վաղ ժամկետում անցկացնելու մասին, հանրաքվեի անցկացման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից[3] :

Սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցեց քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների 95,05 տոկոսը: Հայաստանի անկախության օգտին իր ձայնը տվեց 2 մլն 43 հազար մարդ կամ քվեարկության իրավունք ունեցողների 94, 39 տոկոսը [4]: Անկախությանը դեմ էր քվեարկել մոտ 0, 47 տոկոսը իսկ անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակը կազմում էր քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0, 19 տոկոսը[5] :

1991թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ ԳԽ-ի հատուկ նիստը նվիրված էր հայ ժողովրդի համար կարևորագույն հարցի՝ անկախության հանրաքվեի արդյունքների հաստատմանը, որը վարեց Խորհրդարանի նախագահի տեղակալ Գ. Հարությունյանը:

1991թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը հիմնվելով համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը: Որոշման մեջ ասված էր. «Հավատարիմ մնալով Հայաստանի անկախության մասին հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների և ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ընդունելով 1991թ. սեպտեմբերի 21-ի ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները, ՀՀ Գխ-ը Հայաստանի Հանրապետությունը հռչակում է անկախ պետություն»[6] :

---

[1] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 2(982), 31. Հունվարի. 1991թ., էջ 52:

[2] «Հայաստանի Հանրապետություն», թիվ 202-203(266),24 սեպտեմբերի, 1991թ.:

[3] Տես՝ **Է. Վ. Պողոսյան,** նշված աշխ., էջ 56:

[4] «Հայաստանի Հանրապետություն», թիվ 202-203 (266),24 սեպտեմբերի, 1991թ.:

[5] **Է. Մինասյան,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմութուն, Երևան 2013:

[6] Տես՝ նույն տեղում, էջ 132:

Սեպտեմբերի 24-ին ՀՀ Գխ ի որոշմամբ սեպտեմբերի 21-ը հայտարարվեց ոչ աշխատանքային օր:

1991թ. դեկտեմբերի 25-ին ԽՍՀՄ-ի վերջին նախագահ Մ. Ս. Գորբաչովը տվեց հրաժարական[1]:

70-ամյա ընդմիջումից հետո իր ազգային անկախությունը վերականգնած Հայաստանում մտցվեց նախագահական կառավարման համակարգ: Դեռևս 1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական ընտրություններ (մասնակցում էին 6 թեկնածուներ): Ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր--Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը[2] :

Անկախության փուլը թևախոխած ՀՀ ին ծանր փորձություններ էին սպասում: Այն կտրվել էր նախկին տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991թ. նոյեմբերին հերթական անգամ փակվել էր Ադրբեջանից եկող գազամուղը, սկսվել էր Հայաստանի էներգետիկ շրջափակումը, դադարել էին գործելուց հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները: Տարածաշրջանում պատերազմական գործողությունները դեռ շարունակվում էին[3]:

Սակայն անկախության ճանապարհով Հայաստանը չընկրկեց որևէ դժվարության առաջ և շարունակում էր կազմակերպել երկրի կյանքը՝ փորձելով այն դուրս բերել քաղաքական, տնտեսական, սոցիալական և պատերազմական ծանր վիճակից:

Вардуи Симонян, Начало процесса провозглашение третьей Республики Армения - После распада СССР Армения вышла из состава Советского Союза и провозгласила свою независимость 21 сентября 1991 года. Независимо было заявлено, что Республика Армения является суверенным государством, наделенным верховенством, независимостью и полнотой государственной власти. Эмблема РА, флаг и гимн были приняты. В Декларации независимости подчеркивалось уважение прав человека, свободы совести, партий, собраний и прессы. И что самое важное, восстановлены права Армянской Апостольской Церкви, а также решимость Армении признать Арцах как неотъемлемую часть своей территории. Однако на пути к независимости было много препятствий, но

[1] Տես՝ **Հ. Աբրահամյան,** նշված աշխ., էջ 77-78:
[2] Հայաստանի Հանրապետություն ,թիվ 240-241 (304) 12 նոյեմբերի, 1991 թ.:
[3] Տե՛ս **Է. Մինասյան**, նշված աշխատություն, էջ 132-133:

нужно сказать, что новая независимая республика все же достойно вышла из сложившейся ситуации.

Varduhi Simonyan, Beginning of the process of proclamation of the third Republic of Armenia - With the collapse of the USSR, Armenia withdrew from the Soviet Union and declared its independence on September 21, 1991. In the Declaration of State Sovereignty of Armenia it was stated that the Republic of Armenia is a self-governing state, endowed with the supremacy of state authority, independence, sovereignty, and plenipotentiary power. RA emblem, flag and anthem were adopted. The Declaration of Independence emphasized respect for human rights, freedom of conscience, parties, assembly, and the press. And more importantly restoration of the rights of the Armenian Apostolic Church, as well as Armenias' determination to recognize Artsakh as an integral part of its territory. The way to independence, however, there were many obstacles, but it is noteworthy that the newly independent republic still came out of the situation with dignity.